Արձանագրություն N 3

«ՀՀԷՆ-ԳՀԾՁԲ-23-24/7» **ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան	15 հունվար 2024թ.
	Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ	Վ. Վարդապետյան
Հանձնաժողովի անդամներ	
	Հ. Նիկողոսյան
	Ռ.Գալստյան
	Ա.Փինաջյան
	Լ.Աշոտյան
Գնումները համակարգող քարտուղար՝	Դ. Միերյան

1. Հանձնաժաղովը արձանագրեց, որ ՀՀԷՆ-ԳՀԾՁԲ-23-24/7 ծածկագրով գնման ընթացակարգը armeps համակարգում սխալմամբ լուծարվել է, ինչով պայմանավորված 04.01.2024թ. ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից պաշտոնական գրություն է ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարություն (այսուհետ՝ Լիազոր մարմին), խնդրելով armeps համակարգում ՀՀԷՆ-ԳՀԾՁԲ-23-24/7 ծածկագրով գնման ընթացակարգը վերականգնել, որպեսզի հնարավոր լինի իրականացնել մասնակիցների հայտերի գնահատում:

2. Հանձնաժողովը նաև արձանագրեց, որ Լիազոր մարմնի 11.01.2024թ. թիվ 26/26-1/547-2024 գրությամբ տեղեկացվել է, որ լուծարված ընթացակարգը armeps համակարգում տեխնիկապես հնարավոր չէ վերականգնել, ինչպես նաև՝ Լիազոր մարմնի կողմից առաջարկվել է հետևյալը՝ «հաշվի առնելով, որ վերոգրյալ ծածկագրով լուծարված ընթացակարգի շրջանակներում պատվիրատուի կողմից իրականացված գործողությունների արդյունքում համակարգում տեղի է ունեցել հայտերի բացում, հայտերի բնականոն գնահատում և ավտոմատ դասակարգում, ինչպես նաև հաշվի առնելով, որ վերոգրյալ ծածկագրով ընթացակարգի մասնակիցների հայտերը armeps համակարգի «Հայտեր» դաշտում տեսանելի են՝ առաջարկում ենք, որ պայմանագրի շնորհման գործընթացը շարունակվի փաստաթղթային եղանակով:»:

3. Հաշվի առնելով Լիազոր մարմնի 11.01.2024թ. թիվ 26/26-1/547-2024 գրությունը, ինչպես նաև մասնակիցների կողմից առաջարկված ներքոհիշյալ գները,

ՀՀ դրամ

չափաբաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Գնման առարկայի նախահաշվային գինը Ծառայությունների մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումար	Մասնակցի անվանումը և առաջարկված ընդհանուր գինը *					
					«Ջակո Ավտոդենտ» ՍՊԸ		«Գարանտ Մոթորս» ՍՊԸ		«ՋԻ ԸՆԴ ԷՅ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ	
					Գնի առաջարկը		Գնի առաջարկը		Գնի առաջարկը	
					առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ
1	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ /Էկոնոմիկայի նախարարություն/	դրամ	1	16 981 200	9 150 000	10 980 000	11 547 000	-	6 084 930	7 301 916
2	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ /Զբոսաշրջության կոմիտե/	դրամ	1	4 180 300	-	-	2 842 600	-	1 741 792	2 090 150

(*-եթե մասնակիցը ԱԱՀ վճարող չի հանդիսանում,ապա լրացվում է միայն "Առանց ԱԱՀ" սյունակը)

«ՀՀԷՆ-ԳՀԾՁԲ-23-24/7» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել «ՋԻ ԸՆԴ ԷՅ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ -ին՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով:

4. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

5. Ընտրված մասնակցի հետ գնման պայմանագիրը կնքվելու է օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հանձնաժողովի
նախագահ՝ ---------- Վ. Վարդապետյան

---------- Հ. Նիկողոսյան

---------- Ռ.Գալստյան

---------- Ա.Փինաջյան

---------- Լ.Աշոտյան

Գնումները ամակարգող
քարտուղար՝ ---------- Դ. Միերյան